



ՍԱՐԳԻՍ ԽԱՉԻԿԵԱՆ
1908-2002

Ամենապատիւ Սրբազն Պատրիարք Հայրը, Սրբոց Յակոբեանց Միարանութիւնը եւ պաշտօնէութիւնը խոր վիշտով կը գուժեն մահը Սուրբ Աքոռոյ վաստակաւոր եւ նուիրեալ գրաշար պաշտօնէի, Սարգիս Խաչիկեանին, որ պատահեցաւ 17 Օգոստոս 2002ին, Սուրբ Յակոբեանց Վանքի իր բնակարանին մէջ: Յաջորդ օրը յուղարկաւորութեան արարողութիւնը կատարուեցաւ Ս. Եջմիածին եկեղեցոյ մէջ: Երեկոյեան ժամերգութեան աւարտին, Պատրիարք Սրբազն Հայրը առանձնակի իր «Հոգուցն հանգուցելոց» աղօրքը արտասանեց: Ապա թաղման կարգին մասնակցեցան Միարանութիւնը, ժառանգաւոր ուսանողութիւնը, եւ մեծ թիւով յուղարկաւորներ:

Սարգիս Խաչիկեան ծնած էր Օրտու Քաղաքին մէջ 1908 թուականին: 1915ի եղեննի եւ տարագրութեան արհաւիրքներէն անցնելով, վերապրողներուն հետ Պաղեստին կը հասատուի: Եւ 1927էն մինչեւ 1992 երուսաղէմ Սրբոց Յակոբեանց Վանքի տպարանին մէջ կ'աշխատի իրրեւ մետաղեայ տառերով գրաշար պաշտօնեայ: Հաւատարիմ, բծախնդիր եւ ժրաշան գրաշար մը մնաց, 65 տարիներ շարունակ: Ապա տարիին եւ ֆիզիքական հիւանդութեան պատճառով դադրեցաւ աշխատանքէ:

Հանգուցեալը զաւակն էր Տիգրան եւ Ագապի Խաչիկեաններու: Ունէր մէկ եղայր եւ մէկ քոյր, երկուրէն ալ մահացած: Ամուսնացած էր 16 Սեպտեմբեր 1973ին Օր Վշտածին Պէտքարեանի հետ, կրթութեամբ հիւանդապահուիի, որ խնամատար կողակիցը եղաւ ամուսնոյն:

Յուղարկաւորութենէն յետոյ, աւանդական հոգեսուրբը հրամցուեցաւ Հ.Մ.Ը.Մ.ի սրահին մէջ, ուր Ս. Աքոռոյ Աւագ Քարտուղար եւ Մուխրար Կարապետ Յակոբեանց դրուատիքը ըրաւ հանգուցեալին, անդրադառնալով անոր եկեղեցասիրութեան եւ նուիրեալ գործունէութեան:

Յաւիտենական հանգիստ իր յոգնատանը ուկորներուն:

Կ.Յ.